ւորին, ուր ժողովեալ էին մեծամեծք այլազգեաց. եւ 'ի լինել բանից և հարցմանց վասն վանաց Ս. Յակոբայ. պատասխանի եւուն Պատրիարքն Յունաց եւ վարդապետքն Վրաց յատենի անդ և ասեն. այսուհետեւ ոչ մեք եւ ոչ ազգն մեր որ զկնի, չունիմք և չունին երբէք իրաւունս յարուցանել վէճս և կամ խառվութիւնս 'ի վերայ ազգին Հայոց վասն վանաց Ս. Յակոբայ, կառուցեալ 'ի վերայ լերին Սիոնի. պահանջել զայն եւ կամ ամբաստան լինել զնմանէ. զի վանքն այն 'ի սկզբանէ անտի իրաւամբ եւ հշմարտութեամբ սեփհական է ազգին Հայոց, եւ նոքա տիրեալ և ժառանգեալ են զնա 'ի հարիւրաւոր ամաց հետէ մինչեւ յայսօր. ոչ ոք 'ի քրիստոնէից ունի իրաւունս, ասել ինչ և կամ հակառակիլ վասն այնր։ Զայս ամենայն բանս խոստովանութեան լուաւ դատաւորն 'ի բերանոյ Պատրիարքին Յունաց և վարդապետացն Վրաց. և ժողովն հաստատեաց զբանս վկայութեամբ իւրով. և դատաւորն հարեալ 'ի գրի ետ ցփոխանորդն Հայոց ցՅովնիկ. 'ի Է Զիլ-հիճէ ամսոյ՝ ١٠٣٦ (1626)։

Գնալ Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս՝ յիշատակին յայլ և այլ գիրս, բայց զդէպսն ժամանակին ինքնին հարեալ է 'ի գրի, որ պահի ցարդ արձանագրեալ յեկեղեցին Պալատու 'ի Կոստանդինուպոլիս, յորմէ քաղեալ կարդեմք աստանօր։ Ի սմին ժամանակի էր եկեղեցի յանուն Ս. Նիկողայոսի Հայրապետի 'ի թաղն Գարակիւմբիւկ կոչեցեալ, որոյ մի մասն էր 'ի ձեռս Հայոց բուրաստանօք և գերեզմանատամբ. իսկ բնակարանն նեղ և անձուկ. և էր իջեւանատեղի կամ տուն Երուսաղէմի Պատրիարքաց և միաբանացն Երուսաղէմի 'ի դնալ նոցա անդ։ Իսկ մի մասն էր 'ի ձեռս Լատինաց, բայց այն ընդարձակագոյն քան զՀայոցն սենեկօք պարտիզօք և բուրաստանօք. մինչ զի 'ի հարկաւորիլն՝ Հայք 'ի վարձու ունէին 'ի նոցանէ։ Ի ժամանել Գրիգորի Պատրիարքի անդ, տեսեալ թէ անբաւական է տեղին իւրոցն. դնեաց զտուն առն ուրումն երեւելւոյ՝ որ մերձ էր յեկեղեցին, որ և յետոյ բընաջինջ եղեւ այրն տամբք և ընտանեօք, և խառնեաց զայն 'ի մասն Հայոց. կառոյց սենեակս եւ զայլ կարեւոր շինուածս. և զարդարեաց պարտիզօք և բուրաստանօք, որ